Ավետիք Իսահակյան

Մասիսի մռայլ, խոժոռ ժայռերի

Մասիսի մռայլ, խոժոռ ժայռերի
Իժերը բոլոր թափեցին իմ մեջ
Իրենց թույները ցասման, վրեժի
Թույները կիզող թափեցին իմ մեջ …

Այսքան տառապա՛նք, անարդարությո՛ւն,
Մարտիրոսացան սրբազան շարքեր.
Արյան հեղեղներ, նահատակություն՝
Մի ազգի բաժին – հազար տարիներ;

Մարդկության կողմից դարերով նյութած
Էլ սահման չկա մեր համբերության,
Էլ անուն չկա մեր տառապանաց …
Մեր գերմարդկային, մեր գերբնական:

Էլ քար չըմնաց այս աշխարհի մեջ,
Որ չոռոգվեր մեր սուրբ արյունով,
Էլ նշույլ չըմնաց այս լիրբ մարդկանց մեջ,
Որ չըհոփանար մեր սուրբ արյունով …

Մասիսի մռայլ, խոժոռ ժայռերի
Իժերը բոլոր թափեցին իմ մեջ
Իրենց թույները ցասման, վրեժի
Եվ սիրտս է եռում վրեժով անշեջ …

Դու մոխրի վրա նստած ժողովուրդ՝
Հոշոտված մանկանց դու՝ խելագար հայր, -
Էլ ի՞նչդ մնաց, ի՞նչ պիտ կորցնես. –
Ինչպե՞ս պիտ չափես արկանքդ անծայր …

Դուրս եկ՝ դո՛ւ վագր, դո՛ւ շղթայազերծ.
Աստված ու երկինք ոտաց տակ տալով.
Խփի՛ր, հարվածի՛ր, ջախի՛ր, ջախջախի՛ր,
Զինված ռումբերով, թույնով կայծակով:

Պայթի՛ր, հոշոտի՛ր, խփի՛ր, ջախջախի՛ր՝
Բոլորին, որոնք մարդու են նման –
Երկինքը փուլ տուր, աստղերը մարիր –
Փշրի՛ր աշխարքը մի ձվի նման:

Քար քարի վրա, թո՛ղ բան չըմնա –
Փշրի՛ր գանգերը և թող շան սատակ
Լինեն բոլորը և դու նրանց հետ –
Ընկի՛ր աշխարհի փլատակների տակ …

1905